

Գեղարքունիքի մարզպետն ընդունեց „Ակցիոնա Էներգիա Գլոբալ,ՍԼ ընկերության ներկայացուցիչներին

07.06.2017

Հունիսի 7-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը ընդունեց իսպանական „Ակցիոնա Էներգիա Գլոբալ,ՍԼ ընկերության ներկայացուցիչներին : Հանդիպման նպատակն էր մարզի ղեկավարի հետ քննարկել ընկերության կողմից մարզում նախատեսվող այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրության ծրագրերի մեկնարկը: Ինչպես ներկայացրին „Ակցիոնա Էներգիա Գլոբալ,ՍԼ ընկերության մասնագետները, իրենք նախապատրաստվում են մինչև հուլիս ամիսը մարզի Կարսեր համայնքից հատկացվելիք տարածքում տեղադրել 80 մետր բարձրություն ունեցող 2 չափիչ կայան և 1 հատուկ սարքավորում՝ քամու տեխնիկական տվյալները ստուգելու նպատակով: „Ստուգման գործընթացի համար անհրաժեշտ կլինի մեկ տարի: Բավարար տվյալներ ունենալու դեպքում 2018 թվականի նույն ժամանակահատվածում ընկերությունը նշված տարածքում կկատարի մոտ 40 մլն դոլարի ներդրում՝ 150 մեգավատ հզորությամբ հողմաէլեկտրակայաններ կառուցելու համար: Մեր կազմակերպությունը նախատեսում է ներդրումներ կատարել նաև արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ուղղությամբ,- իր խոսքում նշեց „Ակցիոնա Էներգիա Գլոբալ,ՍԼ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Առաքելյանը: Մարզպետ Կարեն Բոթոյանը ողջունեց և հավանություն տվեց „Ակցիոնա Էներգիա Գլոբալ,ՍԼ ընկերության նախաձեռնությանը և պատրաստակամություն հայտնեց աջակցել ընկերությանը այն աշխատանքներում, որոնք կրիեն մարզպետարանի հնարավորություններից և լիազորություններից: Այս ուղղությամբ կողմերի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր: Մարզպետը ընկերությանն առաջարկեց նաև համագործակցություն հաստատել տուրիզմի , ջերմոցաշինության ոլորտներում: